

## ՇԱԽՄԱՏԻ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ 8-ՐԴ ՕԼԻՄՊԻԱԴԱՑՈՒՄ ՀԱՂԹԵՑ ՎԱՐԴԵՆԻԿԻ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԹԻՄԸ

03.04.2014

Գավառ քաղաքի ավագ դպրոցում ապրիլի 3-ին կայացավ Գեղարքունիքի մարզի շախմատի համադպրոցական օլիմպիադան, որին մասնակցեցին Գավառ, Սեւան, Վարդենիս, Ճամբարակ քաղաքների եւ Վարդենիկ գյուղի կրթահամալիրի թիմը: Օլիմպիադան անցկացվեց շրջանաձև կարգով: Օլիմպիադան կազմակերպվում է ՀՀ Շախմատի ակադեմիայի եւ ՀՀ Կրթության եւ գիտության նախարարության համատեղ ջանքերով, Հայկական բարեգործական ընդհանուր միության ֆինանսական աջակցությամբ: ՀԲԸՄ ներկայացուցիչ Ինեսա Մարգարյանի տեղեկացմամբ՝ շախմատի համադպրոցական 8-րդ օլիմպիադայի կիսաեզրափակիչ փուլն անցկացվում է մարտի 25-ից մինչեւ ապրիլի 10-ն ընկած ժամանակահատվածում, ՀՀ բոլոր մարզերում, Ջավախքում, Արցախում եւ մայրաքաղաք Երեւանում: Կիսաեզրափակիչում հաղթած թիմերը մասնակցելու են հանրապետական եզրափակիչ փուլին, որը տեղի կունենա այս տարվա մայիս ամսին: Գեղարքունիքի շախմատի համադպրոցական օլիմպիադայի կիսաեզրափակիչ փուլին ներկա էին ՀՀ Շախմատի ֆեդերացիայի նախագահի առաջին տեղակալ Սմբատ Լպուտյանը եւ Գեղարքունիքի մարզպետ, ՀՀ Գեղարքունիքի մարզի շախմատի ֆեդերացիայի նախագահ Ռաֆիկ Գրիգորյանը: Մրցաշարում, հաղթողի կոչումը նվաճեց Վարդենիկի կրթահամալիրի շախմատի թիմը: Երկրորդ տեղը նվաճեցին Գավառի, երրորդ տեղը՝ Սեւանի, չորրորդ տեղը՝ Ճամբարակի եւ վերջին տեղը՝ Վարդենիսի ավագ դպրոցների դպրոցական տարիքի շախմատիստները: Հաղթող թիմի անդամները, բացի շախմատի համադպրոցական հանրապետական օլիմպիադային մասնակցելու իրավունք նվաճելը, օլիմպիադայի հովանավոր ՀԲԸՄ կողմից պարգևատրվեցին պլանշետներով: Օլիմպիադայի մյուս մասնակից թիմերի բոլոր դպրոցական շախմատիստները ՀԲԸՄ կողմից պարգևատրվեցին նվազարկիչներով: Առաջին երկու տեղեր զբաղեցրած թիմերն արժանացան ՀՀ Շախմատի ակադեմիայի պատվոգրին: Իր խոսքում Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը հույս հայտնեց, որ դպրոցական այս շախմատիստների մեջ ինքն արդեն տեսնում է այն շնորհալիներին, ովքեր մոտ ապագայում Գեղարքունիքի մարզը կներկայացնեն միջազգային ամենատարբեր մրցաշարերում: